Արձանագրություն N 3
<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/4>> ծածկագրով ընթացակարգի
գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան

17 սեպտեմբերի, 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Բ. Գևորգյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Քոսակյան
Ռ. Աջամօղլյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հարությունյան

1.Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվությունը տրամադրվել է սահմանված ժամկետից 1 օր ուշ, սակայն եզրակացությունից պարզ է դարձել, որ 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ <<ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ <<Ֆոտոն>> ՍՊԸ-ն չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ՊԵԿ հարկային ծառայությունը Արցախի Հանրապետության հարկ վճարողների վերաբերյալ հաշվառում չի վարում, իսկ 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ <<Հերմինե Անդրեասյան>> ԱՁ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ 12000 ՀՀ դրամ /կնքված պայմանագիրը առկա չէ/:

2. Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները՝ <<Ֆոտոն>> ՍՊԸ-ն և <<ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում eauction.armeps.am համակարգի միջոցով գնահատող հանձնաժողովին են ներկայացրել իրենց կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ (հրավերի հավելված N 2 և 3): Ապրանքների ամբողջական նկարագիրը համապատասխանել է պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման առարկաների տեխնիկական բնութագրին, իսկ <<Հերմինե Անդրեասյան>> ԱՁ-ն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չի ներկայացրել իր կողմից առաջարկվող ապրանքի նկարագիրը (հրավերի հավելված N 2 և 3):

3.Գնահատող հանձնաժողովը որոշել է 3-րդ չափաբաժնի մասով մերժել <<Հերմինե Անդրեասյան>> ԱՁ-ի հայտը և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Ֆոտոն>> ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Ծանուցել <<Ֆոտոն>> ՍՊԸ-ին 3-րդ չափաբաժնի մասով ներկայացնելու հրավերով սահմանված փաստաթղթերը:

4. Հանձնաժողովը որոշել է <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/4>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<Ֆոտոն>> ՍՊԸ-ին, 6-րդ չափաբաժնի մասով <<ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

5. Անգործության ժամկետ սահմանել 1-ին, 4-րդ և 5-րդ և 6-րդ չափաբաժինների համար: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

6. 3-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցնող մասնակցի՝ <<Ֆոտոն>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում տրամադրվող ապրանքի տեխնիկական բնութագրի տրամադրմանը հաջորդող աշխատանքային օրը ,ժամը 11:00-ին հասցեն՝ ք. Երևան, կառավարական տուն N 3, 613 աշխատասենյակ:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Բ. Գևորգյան

Անդամներ՝ _____ Ա. Քոսակյան

_____ Ռ. Աջամօղլյան

Քարտուղար՝ _____ Գ. Հարությունյան